

Անկատար Պատմութիւն

հեղինակ՝ Երուանդ Կոպէլեան

— Պիտի մեռնիմ, ըսաւ աչքերը կիսով բանալով: Անպայման պիտի մեռնիմ:

— Խենթ բաներ կ'ըսես, ըսին տղաքը. մեռնիլը այդքան դիւրի՞ն է եղեր: Կեցիր նայինք, տակաւին շա՛տ օրեր ունինք ապրելիք: Քերթեցինք քերթեցինք մինչեւ պոչը բերինք ու ելեր այսօր «պիտի մեռնիմ» կ'ըսես:

Երկինքը պայծառ էր եւ հարաւային գիշերներու յատուկ լիալուսնով կախարդական գեղեցկութիւն մը ունէր: Իր այս գեղեցկութեամբ, ան կը նմանէր պարուհիի մը, — Սալօմէի^[1] մը կամ ուրիշ պարուհի մը— որ իր բոլոր հրապոյրովը պարգուեր էր մեր աչքերուն առջեւ ու ընկերս այս կախարդական պարուհիին թելերուն մէջ, իր մահուան պարը կ'ընէր:

— Պիտի մեռնիմ, մրմնջեց դարձեալ շունչի նման ցած ձայնով մը:

Տղաքը դարձեալ ձգեցին իրենց զբաղումը: Մէկը գայն սաստեց ու յետոյ դարձեալ շարունակեց իր *տօմիկ* խաղը: Ուրիշ մը, որ նամակ մը կը գրէր, կիսատ թողոյց նամակը, ծալլեց ու պայուսակին մէջ դրաւ: Պայուսակը գոցեց ու հիւանդ ընկերոջ դարձաւ.

— Ինծի՛ նայէ, ըսաւ. այդքան շուտո՞վ կը փափաքիս հրաժարիլ կեանքէն: Խե՛նթ տղայ, քիչ մը համբերէ, առաւօտ թող ըլլայ, հարկաւ ճարը կը գտնենք: Կառք մը կամ ինքնաշարժ մը, վերջապէս բաներ մը կը գտնենք անշուշտ: Թողունք որ, ես վստահ եմ թէ առաւօտուն բան մը իսկ մնացած պիտի չըլլայ: Ամէն ցաւ գիշերը քիչ մը կը սաստկանայ, բայց երբ առաւօտ ըլլայ, դուն ալ կը զարմանաս թէ գիշերը «պիտի մեռնիմ» ըսողը դո՞ւն էիր:

— Պիտի մեռնիմ, ըսաւ դարձեալ ցած ձայնով: Ես առաւօտը պիտի չտեսնեմ: Ահա աստղերը կը պլպլան, երկինքը կը շարժի...

— Մեռնելիք մարդուն նայեցէք, ըսաւ անդիէն *տօմիկ* խաղացողներից մէկը: Պիտի մեռնիմ կ'ըսէ, ու ելեր բանաստեղծութիւն կ'ընէ: Խե՛նթ, դուն չէի՞ր ըսողը որ կինդ զաւակ մը ունեցեր է: Որքա՛ն ուրախացեր էիր երբ կարդացիր թէ մանչ էր նորածինը: Օրերով անուններ հոլովեցիր զաւակիդ համար: Դարձեալ, դուն չգրեցի՞ր նամակին մէջ որ առաջին առթիւ լուսանկարը դրկեն: Է՛հ, նամակը գրելդ չորս օր եղաւ: Երկու օր ճամբայ, երրորդ օրը ձերիններուն ձեռքը կը հասնի: Եթէ այն օրը

գրեն, վաղը կամ միւս օր հոս է: Կը հարցնեմ քեզի, ըսէ՛ տեսնեմ, այլեւս անկէ վերջ ցամաքի վրայ մահ կա՞յ քեզի:

Թեթեւօրէն ժպտեցաւ, յետոյ շրթունքները շարժեցան ու մըմնջեց.

— Ես այս գիշեր պիտի մեռնիմ:

Soulhio խաղացողներէն մէկը, բարկութենէն քարերը իրար խառնեց, հայիոյեց ու կոնակը դարձուց անոր: Միւս ընկերը, որ այդ միջոցին դիմացինին զբաղած վիճակէն օգտուելով խաղին հաշիւները կ'ընէր, խոշոր մը թքաւ գրատախտակին վրայ ու հիւանդին դարձաւ.

— Է՛հ, հասկցանք: Ժամը գիշերուան երկուսն է: Ու դուն վեց ժամուայ մէջ հարիւր անգամ «պիտի մեռնիմ» ըսիր: Եթէ փորի ցաւէն մարդ մեռնի, ամօ՛թ մեզի, ամօ՛թ տղամարդութեան: Եթէ փորի ցաւէն մարդ մեռնի, անկէ անմիջապէս վերջ ես անձնասպան կ'ըլլամ: Թո՛ւհ, խերն անիծեմ ես այս պանդխտութեան, որքա՛ն շուտ կը յուսահատեցնէ մարդիկը: Ինծի՛ նայէ, վաղուան թղթաբերով, քու «քուռակ»իդ լուսանկարը պիտի գայ. դուն մեռած պիտի ըլլաս, «հոս այդպիսի մարդ մը գոյութիւն չունի այլեւս, որովհետեւ երէկ գիշեր մեռաւ» պիտի ըսենք ու նամակը եւ լուսանկարը պիտի վերադարձնենք: Ի՞նչ կ'ըսես, կը հաւնի՞ս ասանկ բան մը: Երեւակայէ անգամ մը: Նամակը տուն կ'երթայ, կինդ կ'առնէ, կու լայ: Կինդ կու լայ, զաւակդ արդէն միշտ կու լայ, —մայր ունէիր, չէ՞ — մայրդ կու լայ: Ձգէ սա խենթ մտասէւեռումը: Նայէ՛, սա *տօւֆնօն* պայուսակ կը դնէմ: Առաջին անգամ քեզի հետ խաղալու համար կը վերցնեմ զայն: Քնացիր ու առաւօտուն բան մը կ'նենք անշուշտ: Ահա, մենք բոլորս ալ արթուն ենք տակաւին: Մինչդեռ վաղը կանուխ պետք է ելլենք:

Դուրսը, լիալուսնին լոյսը այնքան առատ է, որ առանց չափազանցած ըլլալու կարելի է ըսել թէ գիրք կը կարդացուի այդ լոյսին տակ: Այնքա՛ն գեղեցիկ է երկինքը, որ հարիւրներով բանաստեղծ կրնայ ներշնչել իր «աստղ աչքեր»ով, «կապոյտ սնդուսէ դէմք»ով, «շուշանաբոյր գեփիւռ»ով...

Ու ասոնց մէջ մեր ընկերը պիտի մեռնի...

— Կոպէ՛լ, ըսաւ աչքերը ինծի դարձնելով, Կոպէ՛լ, եղբա՛յրս: Դուն ասոնց մի՛ նայիր: Մահը, ո՛չ զաւակ կը ճանչնայ, ոչ կնոջս արցունքները, ոչ ալ մօրս ողբն ու կոծը: Ես այս գիշեր պիտի մեռնիմ: Ա՛խ, Կոպէլ, Աստուած գիտէ թէ որքան կը սիրէի կեանքը, մարդիկը: Բայց ես այս գիշեր պիտի մեռնիմ:

Գլխուն վերեւ նստած, ձեռքերս կուրծքիս վրայ ծալլած, կը մտածէի: Բոլոր յոյսերս ու ընկերս փրկելու կարելիութիւններս խաչուած էին կուրծքիս վրայ: Եւ ես ձեռնածալ նստած էի մահամերձ ընկերոջս գլխուն վերեւ: Ա՛խ, մահուան չափ դժուար է, նոյնիսկ մահուրնէ աւելի դժուար է մահուան սեմին վրայ գտնուող ընկերոջ մը գլխուն վերեւ այդպէս նստիլը:

— Հեռուէն լոյս մը կ'երեւայ, ըսաւ ընկերներէն մէկը յանկարծ:
Թերեւս *քամփոն* մըն է, որ մեր կողմը կու գայ: Ես ճամբուն վրայ կ'ելլեմ, որպէսզի
կեցնեմ: Եթէ երկար երկար *քոնսա* ն հնչեցնէ, դուք գայն պատրաստեցէք: Հիւանդանոց
մը տանինք: Թօեւ մենք գլխուն վերեւ պիտի չկարենանք գտնուիլ, սակայն գոնէ
վստահ կրնանք ըլլալ թէ մեզմէ լաւ կը խնամեն:

Յետոյ ցատկեց գնաց ճամբուն վրայ կեցաւ մօտեցող ինքնաշարժը
կամ *քամփոն*ը կեցնելու համար:

Լոյսը, մօտեցաւ մօտեցաւ ու կեցաւ: Միջոց մը շարժակը միօրինակ կերպով
աշխատելէ վերջ, *քոնսն* երկու անգամ հնչեցուց ու շարժակը կեցաւ:

Մենք պատրաստեցինք հիւանդը ինքնաշարժ դնելու համար:

— Նամակը, ըսաւ, Կոպէ՛լ, նամակը, լուսանկարը առաջին առթիւ
հիւանդանոց կը դրկես անշուշտ, այնպէս չէ՞:

— Հոգ մի՛ ըներ, ըսի գայն ապահովելով, անշուշտ թէ կը դրկեմ եւ վստահ եմ
թէ պատասխանը երկու օր վերջ իսկ դուն քու ձեռքով պիտի գրես:

— Հապա եթէ մեռնի՛մ, ըսաւ. հապա եթէ մեռնիմ...

— Այլեւս մահուան վրայ մի խօսիր, ըսի: Հիւանդանոցը այնքան ճարտար
բժիշկներ կան որ, երբեք տեսնուած չէ մարդու մը փոքրի ցաւէն մեռնիլը: Քաջ եղիր քիչ
մը: Ահա, արդէն *քոնսա* կը հնչեցնեն: Դրամներդ առի՛ր: Կեցի՛ր շուտ մը
ճերմակեղէններդ փոխենք: Սա նկարն ալ առ, կնոջդ լուսանկարն է: Դրամներուդ
քովը դիր որ *քարանդինա*ի ընթացքին հագուստներուդ մէջ չմնայ: *Էթիւլ*ը իւերը
կ'անիծէ նկարներուն: Օր մը, իմ քրոջս նկարը անճանաչելի դարձաւ *Էթիւլ*է մը վերջ:
Հիմա ըսէ, շալկէ՛մ քեզ թէ կը քալես:

— Պիտի չկարենամ քալել, ըսաւ: Ա՛խ, շատ ամօթ է, բայց պիտի չկարենամ
քալել: Գրկեցէ՛ք զիս, ա՛խ պիտի մեռնիմ...

Գրկեցինք զինքը ու տարինք տեղաւորեցինք ինքնաշարժին մէջ:

— Նամակը չմոռնաս, ըսաւ: Եթէ լուսանկարը մէջն է, անպայման առաջին
առթիւ դրկէ, բայց եթէ լուսանկար չկայ, կարելորութիւն չունի: Աւելի վերջն ալ կ'ըլլայ:
Ա՛խ, գաւակս որք պիտի մնայ...

— Ոտքերդ երկարէ՛, ըսի: Ճամբան բաւական երկար է, բայց անգամ մը որ
հիւանդանոց հասնիս, դո՛ւն պիտի ամչնաս այս ըրածներէդ: Երթաս բարո՛վ, անցեալ
ըլլայ: Պայուսակդ ես կը պահպանեմ: Մի՛ մոռնար որ քեզ կը սպասենք. երկու օր
վերջ պիտի գաս:

Ինքնաշարժին շարժակը սկսաւ բանիլ, գոյգ աչքերը վառեցան ճամբուն վրայ: Այրած պէնզինի բարկ հոտ մը լեցուց մեր ռունգերը եւ ինքնաշարժը գնաց, հեռացաւ, հեռացաւ, կորսուեցաւ դարձդարձիկ ճամբաներու մէջ:

Հետեւեալ առաւօտ, թղթաբերը նամակ մը բերաւ: Նամակին մէջ էր նաեւ երախայի մը լուսանկարը, որուն ետին թաթիկի մը մատներուն շուրջ մատիտ մը պտըտցուցեր էին, իբր ստորագրութիւնը այդ լուսանկարին տիրոջը:

Պզտիկը կը ժպտէր ու թելերը երկարեր էր՝ կարծես հայրը գրկելու համար:

Այդ թղթաբերով իսկ, քաղաքին հիւանդանոցը դրկեցի նամակը՝ իր տիրոջը յանձնելու համար:

Իսկ յաջորդ օրուան թղթաբերը այս անգամ քաղաքէն բերաւ ուրիշ նամակ մը, Ֆրանսերէն լեզուով գրուած, ինչպէս նաեւ *քարտ* մը՝ որուն վրայ կար հետեւեալ արձանագրութիւնը.

«Cimetières Militaires Français» PIII-113

Ձեր ընկերներէն Գ. Է. ի հանգչաց տեղը, ուր կարելի է այցելել, բացի երեքշաբթիէ՝ ամէն օր:

Պաշտօնական կնիք Ֆրանսական Զինուորական Գերեզմանատան:

Հայր ու զաւակ նոյն ճամբէն անցեր էին, առանց զիրար ճանչնալու:

Դէպի Լոյս
04.03.1950

• **↑ Սալօմէ** Հրեայ իշխանուհի, ապրած՝ Յ. Ք. 70 ական թուականներուն. իր հօրեղբոր Հերովդէս Անտիպասին առջեւ պարած է, ուզելով գլխատումը Յովհաննէս Մկրտչի, փոխարէն իր նշանաւոր պապին